Ալբերտ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ

2012 թ. ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ տնտեսագիտության տեսություն մասնագիտությամբ: ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում ստացել է տնտեսագիտության մագիստրոսի որակավորում՝ «Մենեջմենթ» մասնագիտությամբ, 2017 թ.՝ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2018 թ.-ից դասավանդում է ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում: Հեղինակ է 12 գիտական հոդվածների:

https://orcid.org/0000-0003-1029-3620

ՄԵՐՁԴՆԵՍՏՐԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ. ԱԿՈՒՆՔ, ԷՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

DOI: 10.52174/2579-2989_2022.4-88

Հիմնաբառեր. *Մերձդնեստր, Մոլդովա, կոնֆլիկտ, պատերազմ, տնտեսություն, Գագաուզիա, հեռանկարներ*

Խորհրդային Միության կազմալուծումը թեպետ հարաբերականորեն ավելի խաղաղ էր, ի տարբերություն, օրինակ՝ մեկ այլ դաշնային սոցիալիստական պետության՝ Հարավսլավիայի, սակայն առանձին շրջանների անկախական նկրտումները հաճախ ուղեկցվում էին զինված պայքարով, որը, հետագայում փոխակերպվելով «սառած հակամարտությունների», վերածվում էր հետխորհրդային մի շարք երկրների պետականության տակ դրված ականի՝ խոչընդոտելով վերջիններիս զարգացումը և սպառնալով տարածաշրջանային կայունությանն ու խաղաղությանը: Մերձդնեստրի բախումը մեկն է հետխորհրդային տարածքում ցայսօր չլուծված այն կոնֆլիկտներից, որոնց հիմքում փոքրամասնության պայքարն է՝ հանուն ինքնորոշման իրավունքի իրացման և ճանաչման:

Հոդվածում քննարկվում են մերձդնեստրյան բախման ակունքներն ու էությունը, առանձին-առանձին ներկայացվում են դրան վերաբերող բոլոր միջազգային անկյունաքարային համաձայնագրերի բովանդակությունը, զուգահեռներ են անցկացվում Մերձդնեստրի և Մոլդովայի կազմում գտնվող Գագաուզիայի ինքնավարության միջև՝ ցույց տալով երկու կոնֆլիկտի միևնույն առիթը՝ միմյանցից տարբեր զարգացմամբ: Վերլուծությունը եզրափակվում է Մերձդնեստրի կոնֆլիկտի լուծման երկու հավանական սցենարների ներկայացմամբ:

Մերձդնեստրի Հանրապետությունը մի շարք էթնիկ խմբերից բաղկացած չճանաչված պետություն է, որը տեղակայված է Մոլդովայի և Ուկ-

ռաինայի հանրապետությունների միջև: Աշխարհագրական դիրքի հետ կապված՝ վերջինիս անվանումը ռուսերենում և անգլերենում տարաբնույթ է: Մասնավորապես՝ երկրի անվանումն անգլերենով Transnistria (հաճախ նաև Transdnistria) է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Արևմուտքի դիտանկյունից այն գտնվում է Դնեստր գետի ավազանից անդին (անգլերենում «trans» նախածանցը նշանակում է անդին): Մինչդեռ ռուսերենով դա հնչում է Приднестровье, քանի որ Արևելքի (Ռուսաստանի) տեսանկյունից երկրի սահմանները պարուրվում են Դնեստր գետով՝ չանցնելով գետից անդին (ռուսերենում «перед» նշանակում է նախքան, ուստի եթե թարգմանենք բառացի, ապա Приднестровье բառը նշանակում է նախքան Դնեստրը:) Մերձդնեստրի հակամարտությունը համընկել է Խորհրդային Միության կազմալուծման հետ, երբ տեղի բազմազգ բնակչության և նորանկախ Մոլդովայի՝ հիմնականում ռումինախոս բնակչության փոխադարձաբար ներհակ ազգային ինքնությունները դրդեցին Մերձդնեստրի վերնախավին հռչակելու տարածաշրջանի անկախությունը Մոլդովայից: Նախքան հակամարտության բուն էության ներկայացումը՝ անդրադառնանք այն հիմնական պատմական իրադարձություններին, որոնք նախորդել են Մերձդնեստրի կոնֆլիկտին (աղյուսակ 1):

Հակամարտության նախապատմությունը

Առաջին համաշխարհային պատերազմը և դրան հաջորդած հեղափոխությունը Ռուսաստանում Բեսարաբիայի ռումինական ազգային ուժերին իրենց համազգային իղձերի իրականացման, իմա՝ ռումինական բոլոր հողերը մեկ պետության կազմում միավորելու հույսեր արթնացրին: 1917 թ.-ի ամռանը ձևավորվեց Ազգային ժողովը (Sfatul Tarii), որը գլխավորապես բաղկացած էր ազգային և ռումինամետ ուժերից: Դեկտեմբերի 15-ին Ազգային ժողովը հռչակեց Բեսարաբիայի Մոլդովական Ժողովրդավարական Հանրապետության հիմնադրումը, որն ընդգրկում էր Պրուտ և Դնեստր գետերի միջև ընկած ռումինական տարածքները: Հատկանշական է, որ մերօրյա չճանաչված Մերձդնեստրի Հանրապետության տարածքը նշյալ պետության կազմի մեջ չէր մտնում: 1918 թ.-ի մարտի 18-ին Ազգային ժողովը որոշում ընդունեց Ռումինիայի հետ միավորման մասին, և 1918 թ.-ի վերջին Բուկովինան, Բեսարաբիան և Տրանսիլվանիան միավորվեցին՝ ստեղծելով Մեծ Ռումինիան[1]: Երկու աշխարհամարտերի միջև ընկած ժամանակահատվածում Մեծ Ռումինիայի Թագավորության և Խորհրդային Միության սահմանն անցնում էր Դնեստր գետով: Բեսարաբիան, որն ընդգրկում է ժամանակակից Մոլդովայի մեծ մասը, այդ ժամանակ Ռումինիայի կազմում էր, մինչդեռ Մերձդնեստրը՝ Խորհրդային Միության, իսկ ավելի որոշակի՝ Ուկրաինայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության[2]: 1939 թ.-ի օգոստոսի 23-ին ԽՍՀՄ-ի և հիտլերյան Գերմանիայի միջև ստորագրված Մոլոտով-Ռիբենտրոպ համաձայնագիրը հիմք ընդունելով՝ ԽՍՀՄ-ը 1940 թ.-ին ներխուժում է Բեսարաբիա՝ հիմնադրելով ՄԽՍՀ-ն: Այդպիսով՝ Մերձդնեստրը դառնում է ՄԽՍՀ բաղկացուցիչ մասը[3]:

Խորհրդային տարիներին տարածաշրջանի ժողովրդագրական կազմն էական փոփոխությունների է ենթարկվել ԽՍՀՄ ղեկավարության կողմից կիրառված բըռնաճնշումների հետևանքով: Մասնավորապես՝ 1941-1950 թթ.-ների ընթացքում տեղի է ունեցել աքսորի երեք ալիք: Առաջինն իրականացվել է 1941 թ.-ին, երբ ԽՍՀՄ ներքին գործերի ժողովրդական կոմիսարը 1315 վագոն է պատվիրել Ռումինիայի հետ համագործակցության և վերջինիս համար լրտեսության մեջ կասկածվող ռումինացիների բռնի տարհանման նպատակով: Տարբեր աղբյուրներ տեղահանվածների տարբեր թվեր են մատնանշում, որոնք տատանվում են 22000-30000-ի միջակայքում: Երկրորդ՝ ամենամեծ ալիքը տեղի է ունեցել 1949 թ.-ին, երբ, համա-

[1] Roper, Steven D. "Regionalism in Moldova: The Case of Transnistria and Gagauzia." Regional & Federal Studies 11, no. 3 (2001): p. 102.
[2] Akpinar, Ömer. "A Frozen Conflict Zone in Moldova: Why No Solution Found in Transnistria." Bayterek Uluslararasi Akademik Araştirmalar Dergisi 4, no. 2 (2021), p. 180.
[3] Նույն տեղում, էջ 181:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Մերձդնեստրի ժամանակակից պատմության անկյունաքարային իրադարձությունները[4]

Տարեթիվ	Իրադարձություն
1792	Ռուսական կայսրությունը գրավում է Մոլդովայի իշխանապետության արևելյան մասը:
1812	Ռուս-թուրքական պատերազմի և Բուխարեստի համաձայնագրի արդյունքում Մոլդովայի իշխանապետության արևելյան հատվածը ռուսներն անվանակոչում են Բեսարաբիա:
1917	Բեսարաբիայի Մոլդովական Ժողովրդավարական Հանրապետության հիմնադրում:
1919	Օդեսա քաղաքում հռչակվում է Բեսարաբիայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, որը 1919 թ.-ի մայիսի 11-ից վերածվում է ՌԽՍՀ ինքնավար մարզի:
1924	Ուկրաինայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմում ստեղծվում է Մոլդովայի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը՝ ներառելով Մերձդնեստրը:
1940	Հիմնադրվում է Մոլդովայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (ՄԽՍՀ): Ուկրաինային են անցնում այն համայնքները, որոնցում մեծամասնությունը ուկրաինացիներ են, մինչդեռ Մերձդնեստրը դառնում է ՄԽՍՀ բաղկացուցիչ մասը:
1989	ՄԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունում է «Լեզուների կիրառման մասին» օրենքը:
1990	Հունիսի 23-ին ՄԽՍՀ խորհրդարանը հայտարարում է հանրապետության ինքնիշխանության մասին, որը, ի թիվս այլ հարցերի, ենթադրում է, որ մոլդովական օրենսդրությունը գերակա է խորհրդայինի նկատմամբ:
1990	Սեպտեմբերի 2-ին ՄԽՍՀ խորհրդարանում Դնեստր գետի ձախ ափի բնակավայրերը ներկայացնող պատգամավորներն ընդունում են Մերձդնեստրի Մոլդովական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հիմնադրման մասին որոշումը՝ հռչակելով նորաստեղծ ինքնահռչակ միավորի անկախությունը ՄԽՍՀ-ից:
1991	Օգոստոսի 25-ին ՄԽՍՀ-ն անկախանում է Խորհրդային Միությունից:
1991	Դեկտեմբերի 13-ին Մերձդնեստրի անջատողականները հարձակումներ են գործում մոլդովական ոստիկանական բաժանմունքների վրա:
1992	Մայիսի 21-ին Մերձդնեստրի նախագահ Սմիրնովը հրամանագիր է ստորագրում, համաձայն որի՝ ռուսական 14-րդ բանակն անցնում է Մերձդնեստրի տրամադրության տակ: ՌԴ նախագահ Ելցինը հաստատում է դա:
1992	Հուլիսի 21-ին Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը և Մոլդովայի նախագահ Միրչա Սնեգուրը կոնֆլիկտի խաղաղ լուծման վերաբերյալ համաձայնագիր են կնքում:
1997	Մոլդովայի նախագահ Պետրու Լուչինսկին և Մերձդնեստրի նախագահ Իգոր Սմիրնովը ստորագրում են «Մոլդովայի Հանրապետության և Մերձդնեստրի միջև հարաբերությունների կարգավորման հիմունքների մասին» հուշագիրը (Պրիմակովյան հուշագիր):
1999	ԵԱՀԿ ստամբուլյան գագաթնաժողովին ՌԴ-ն խոստանում է մինչև 2002 թ.-ի դեկտեմբերի 31-ը դուրս բերել իր զորքերը Վրաստանից և Մոլդովայից, որը, սակայն, չի իրականացնում:
2003	ՌԴ-ն առաջարկում է Մոլդովայի դաշնայնացման ծրագիր (Դմիտրի Կոզակի հուշագիրը):
2005	Ստեղծվում է «5+2» բանակցային ձևաչափը:
2016	«5+2» ձևաչափի շրջանակում ներկայացվում է «Բեռլին+» առաջարկությունների փաթեթը:

ձայն պաշտոնական աղբյուրների, շուրջ 35000 հարուստ կալվածատեր ռումինացի աքսորվել է Հարավային Ղազախստան՝ մեղադրվելով Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Գերմանիայի և Ռումինիայի հետ համագործակցության համար: Եվ, վերջապես, բռնի տեղահանման երրորդ ալիքի ընթացքում՝ 1951 թ. մարտի 31-ից մինչև ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում, ԽՍՀՄ իշխանություններն աքսորել են «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության անդամներին: Նշենք, որ բռնի տեղահանվածներից շատերն այդպես էլ երբեք չեն գտել իրենց ընտանիքները: Միաժամանակ, ԽՍՀՄ այլ հանրապետություններից ՄԽՍՀ և, մասնավորապես, Մերձդնեստրի Հանրապետության ներկայիս տարածք են ժամանել հազարավոր ռուսներ, ուկրաինացիներ և այլազգիներ, որոնց մեծա-

[4] Ülger, Irfan Kaya, and Iuliana Oprea. "The Conflict of Transnistria." Available at https://e-journaloflaw.org/wp-content/uploads/2017/05/The-Conflict-of-Transnistria.pdf

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Մերձդնեստրի բնակչությունը 1936 և 1989 թվականներին[5]

Ազգություն	1936 թ.		1989 թ.	
Մոլդովացիներ	122.683	41.8%	239.936	39.3%
Ուկրաինացիներ	84.293	28.7%	170.079	28.3%
Ռուսներ	41.794	14.2%	153.393	25.5%
Հրեաներ	23.158	7.9%	-	-
Այլ	21.873	7.4%	38.252	6.4%
Ընդամենը	271.928	100%	601.660	100%

մասնությունը զբաղեցրել է ամենաբարձր հանրային պաշտոններ[6]: Աղյուսակ 2-ում ներկայացված է Մերձդնեստրի բնակչության էթնիկ կազմը 1936 և 1989 թվականներին:

1985 թ.-ի մարտի 11-ին ԽՍՀՄ-ում Միխայիլ Գորբաչովի իշխանությունը նշանավորվում է մի շարք շրջադարձային փոփոխություններով, որոնք միտված էին երկրի ազատականացման մակարդակի բարձրացմանը: Այս գործընթացը ճանաչում գտավ «հրապարակայնություն» (гласность) և «վերակառուցում» (перестройка) հասկացությունների միջոցով: Ազատակա նացման և խորհրդային ամբողջատիրական վարչակարգի բարեփոխման առաջին «պտուղները» Մոլդովայում երևան եկան դեռևս 1989 թ.-ին, երբ խորհրդային հանրապետության խորհրդարանն ընդունեց «Լեզուների կիրառման մասին» ՄԽՍՀ օրենքը[7]: Օրենքի հռչակագրային մասում ընդգծվում է մոլդովացիների ռումինական ինքնությունը, իսկ լատինատառ ռումիներենին տրվում է ՄԽՍՀ պետական լեզվի, մինչդեռ ռուսերենին՝ միջազգային հաղորդակցման, ինչպես նաև փոքրամասնության լեզվի կարգավիճակ: Սակայն, պետք է նշել, որ պետական մարմինների հետ առնչվելիս քաղաքացիներին հնարավորություն էր տրվում ընտրելու երկու լեզուներից մեկը՝ ռումիներեն կամ ռուսերեն[8]: Հատկանշական է, որ Մոլդովայում գործածվող ռումիներենի կյուրեղյան այբուբենը օրենքով փոխարինվում է լատինատառով: Նշենք սակայն, որ նախքան XIX դարը ռումիներենը հիմնված էր կյուրեղյան այբուբենի վրա, միայն 1860-ականներին դա փոխարինվեց լատինատառով: Մինչդեռ, երբ ներկայիս Մոլդովայի տարածքը հայտնվեց ԽՍՀՄ կազմում, լատինատառ այբուբենը դարձյալ փոխարինվեց կյուրեղատառով: Եվ սա այն դեպքում, երբ հարևան Ռումինիայում կիրառվում էր լատինատառ այբուբենը[9]:

1990 թ.-ին ՄԽՍՀ գերագույն խորհրդի ընտրություններում գրանցվելու իրավունք տրվեց միայն Մոլդովայի կոմունիստական կուսակցությանը, իսկ Մոլդովայի ժողովրդական ճակատի (ՄԺՃ) անդամները կարող էին գրանցվել՝ որպես անկախ թեկնածուներ: ՄԺՃ-ն ընդդիմադիր շարժում էր՝ կազմված հետևյալ երեք կազմակերպությունների միությունից՝ Ժողովրդավարական շարժում, Մոլդովացի ուսանողների լիգա և Բնապահպանական շարժում[10]: Հենց վերջիններս էլ զբաղեցնում են 380 տեղ ունեցող խորհրդարանի 101 տեղը կամ 27%-ը: Սակայն, ի տարբերություն կոմունիստների, որոնք ընտրության արդյունքում խորհրդարանում ստացել էին ընդամենը 53 տեղ, ՄԺՃ անդամներին հաջողվում է ապահովել լայն կոնսոլիդացիա[11]:

[5] Vahl, Marius, and Michael Emerson. "Moldova and the Transnistrian conflict." Jemie (2004):
[6] Ülger, Irfan Kaya, and Iuliana Oprea. "The Conflict of Transnistria." pp.13-16 Available at https://e-journaloflaw.org/wp-content/uploads/2017/05/The-Conflict-of-Transnistria.pdf
[7] Law of the Moldavian Soviet Socialist Republic of September 1, 1989 No. 3465-XI About functioning of languages in the territory of the Republic of Moldova (as amended on 24-05-2018), available at https://cis-legislation.com/document.fwx?rgn=3281
[8] Նույն տեղում:
[9] Ülger, Irfan Kaya, and Iuliana Oprea. "The Conflict of Transnistria." Available at https://e-journaloflaw.org/wp-content/uploads/2017/05/The-Conflict-of-Transnistria.pdf
[10] Roper, Steven D. "Regionalism in Moldova: The Case of Transnistria and Gagauzia." Regional & Federal Studies 11, no. 3 (2001): p. 104.
[11] Mason, John Alan. "Internationalist mobilization during the collapse of the Soviet Union: the Moldovan elections of 1990." Nationalities Papers 37, no. 2 (2009): p. 168.

Նրանք Ռումինիայի հետ Մոլդովայի (վերա)միավորման գաղափարի ջատագովներն էին: Վերջիններիս օրոք փոխվեց Մոլդովայի դրոշը՝ փոխառելով ռումինականը, որի վրա ավելացավ զինանշան, ինչպես նաև ընդունվեց ազգային օրհներգ («Deşteaptă-te, române!», որը թարգմանա բար նշանակում է՝ «արթնացիր Ռումինիա»), որը, սակայն, հետագայում՝ 1994 թ.-ն, փոխարինվեց նորով՝ «Limba noastră»-ով (թարգմանաբար նշանակում է՝ «Մեր լեզուն»): Հատկանշական է, որ Մոլդովայի օրհներգն իրավամբ ռումիներենին նվիրված ձոներգ է: Ուստի պատահական չէ, որ ռումիներենի և առհասարակ ռումինական ինքնության այդչափ կարևորումը Մոլդովայի ռուսախոս և այլ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները «սվիններով» ընդունեցին: Վերջիններիս վարքագիծն ակադեմիական գրականության մեջ հայտնի դարձավ որպես ռեակտիվ ազգայնականություն[12]:

Մերձդնեստրի պատերազմը

Մերձդնեստրի բնակչության և, հատկապես, վերնախավի դիմադրությունը Մոլդովայի իշխանությունների վարած լեզվական քաղաքականությանը հանգեցրեց զինված բախման: Բնակիչները մտահոգ էին Մոլդովայի և Ռումինիայի վերամիավորման հեռանկարով, քանի որ տարածաշրջանը երբեք չէր եղել Ռումինիայի կազմում: Լայնածավալ ռազմական գործողությունները մեկնարկեցին 1992 թ.-ին՝ նշանավորվելով Մերձդնեստրի ապստամբների՝ մոլդովական ոստիկանական բաժանմունքների վրա հարձակումներով: Ի պատասխան Մերձդնեստրի տեղացիների զինված գործողություններին՝ Մոլդովայի այն ժամանակվա նախագահ Միրչա Սնեգուրն արտոնեց ռազմական գործողությունները սկսել Դնեստր գետից ձախ ընկած հատվածից: Մոլդովական բանակին սկզբում հաջողվեց իր վերահսկողության տակ առնել որոշակի բնակավայրեր : Հատկապես թեժ մարտեր ընթացան Տիղինա (Բենդեր) քաղաքի համար: Սակայն, ըստ ռումինական և մոլդովական աղբյուրների, Մերձդնեստրի ապստամբներն էական օժանդակություն էին ստանում ռուսական 14-րդ բանակային միավորումից, ինչպես նաև կամավորագրված կազակներից[13]: Միաժամանակ, նշվում է, որ պատերազմի ժամանակ կար խորհրդային բանակից մնացած մոտ 40.000 տոննա ռազմամթերք[14]: Դժվար էր հստակորեն տարբերակել ռուսական և մերձդնեստրյան զինված ուժերը: Այս առումով, հատկանշական է, որ ռուսական 14-րդ բանակային միավորման ղեկավար, գեներալ Գենադի Յակովլևը հետագայում դարձավ Մերձդնեստրի պաշտպանության նախարար[15], իսկ խորհրդարանի փոխնախագահ Գալինա Անտիուֆեևայի ամուսին Վլադիմիր Անտիուֆեևը՝ նախ Մերձդնեստրի ազգային անվտանգության նախարար, ապա ինքնահռչակ Դոնեցկի Ժողովրդական Հանրապետության փոխվարչապետ[16]: Մերձդնեստրի պատերազմը նշանավորվեց ռուս գեներալ Ալեքսանդր Լեբեդի հետևյալ խոսքով. «Եթե պատերազմը չդադարեցնենք, ապա ես վաղը կնախաճաշեմ Տիրասպոլում, կճաշեմ Քիշնևում և կընթրեմ Բուխարեստում»: Մերձդնեստրի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պնդմամբ՝ հենց գեներալի վերոնշյալ խոսքը վերջ դրեց պատերազմին[17]: Պատերազմում զոհվածների և վիրավորների ընդհանուր թվի վերաբերյալ տարբեր պնդումներ կան՝ տատանվելով մի քանի հարյուրից մինչև մեկ հազարը: Շուրջ հարյուր հազար մարդ այդ ընթացքում լքեց հայրենի տունը՝ դառնալով ներքին տեղահանված կամ փախստական[18]:

[12] Crowther, William. "The politics of ethno-national mobilization: nationalism and reform in Soviet Moldavia." The Russian Review 50, no. 2 (1991).

[13] Ülger, Irfan Kaya, and Iuliana Oprea. "The Conflict of Transnistria.", p. 20 Available at https://e-journaloflaw.org/wp-content/uploads/2017/05/The-Conflict-of-Transnistria.pdf

[14] Roper, Steven D. "Regionalism in Moldova: The Case of Transnistria and Gagauzia." Regional & Federal Studies 11, no. 3 (2001): p. 108.

[15] Նույն տեղում:

[16] Dembińska, Magdalena, and Frédéric Mérand. "The role of international brokers in frozen conflicts: the case of Transnistria." Asia Europe Journal 17, no. 1 (2019), p. 12.

[17] Министерство иностранных дел Приднестровской Молдавской Республики, '' Приднестровье: государство, которого не существует", доступны на https://mid.gospmr.org/ru/FxB

[18] Vahl, Marius, and Michael Emerson. "Moldova and the Transnistrian conflict." Jemie (2004): 1, p. 8.

ՆԿԱՐ 2

Չճանաչված Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետությունը[19]

1992 թ.-ի հուլիսի 21-ին Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը և Մոլդովայի նախագահ Միրչա Սնեգուրը Մոսկվայում ստորագրեցին «Դնեստրի շրջանի և Մոլդովայի Հանրապետության միջև զինված հակամարտության կարգավորման սկզբունքների վերաբերյալ համաձայնագիր», որը ենթադրում էր հետևյալ հիմնական դրույթների իրագործումը.

1. զինադադարի հաստատում,
2. Մոլդովայի և Մերձդնեստրի միջև անվտանգության գոտու ստեղծում,
3. Ռուսաստանի, Մերձդնեստրի և Մոլդովայի ներկայացուցիչներից բաղկացած եռակողմ կոմիտեի ստեղծում, որը պետք է հետևեր համաձայնագրի դրույթների կյանքի կոչմանը,
4. կոմիտեին ենթակա անձնակազմի ստեղծում,
5. կոմիտեի կենտրոնական կայանի տեղակայմամբ պայմանավորված՝ Բենդեր քաղաքին անվտանգության հատուկ կարգավիճակի շնորհում,
6. Մոլդովայում տեղակայված ռուսական 14-րդ բանակային միավորման կողմից չեզոքության պահպանում,
7. ռուսական 14-րդ բանակային միավորման կարգավիճակի և հետագա դուրսբերման ժամանակացույցի որոշում՝ հետագա բանակցությունների միջոցով,
8. փախստականների և տեղահանված անձանց վերադարձի, ինչպես նաև հակամարտության գոտի միջազգային մարդասիրական աջակցության անարգել մուտքի ուղղությամբ գործուն քայլերի ձեռնարկում:

Պրիմակովյան հուշագիր[20]

1997 թ.-ի մայիսի 8-ին Մոսկվայում Մոլդովայի նախագահ Պետրու Լուչինսկին և Մերձդնեստրի նախագահ Իգոր Սմիրնովը, Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմայի երաշխավորությամբ, ինչպես նաև Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) գործող նախագահ Նիլս Հելվեգ-Պետեր սենի մասնակցությամբ, ստորագրեցին «Մոլդովայի Հանրապետության և Մերձդնեստրի միջև հարաբերությունների կարգավորման հիմունքների մասին» հուշագիրը, որն առավել հայտնի է որպես «Պրիմակովյան հուշագիր»՝ ի պատիվ ՌԴ նախկին արտգործնախարար Եվգենի Պրիմակովի: Համաձայնագիրը ենթադրում էր հետևյալ դրույթների կյանքի կոչումը.

1. հակամարտության լուծման նպատակով ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառման բացառում,
2. Մերձդնեստրի հետագա կարգավիճակի փոխադարձ ընդունելի լուծման որոնում՝ հիմնված լիազորությունների պատվիրակման և փոխադարձ երաշխիքների ապահովման սկզբունքների վրա,
3. Մերձդնեստրի մասնակցություն Մոլդովայի արտաքին քաղաքականությանը

[19] United Nations peacemaker, Agreement on the principles for a peaceful settlement of the armed conflict in the Dinestar region of the Republic of Moldova dated at 21/07/1992, available at https://peacemaker.un.org/sites/peacemaker.un.org/files/MD%20RU_920000_AgreementPrinciplesPpeacefulSettlementDniestrConflict.pdf.

[20] United Nations peacemaker, Memorandum On the Bases for Normalization of Relations Between the Republic of Moldova and Transdneistria, available at https://peacemaker.un.org/sites/peacemaker.un.org/files/MD_970508_Memorandum%20on%20the%20Basis%20for%20Normalization%20of%20Relations%20between%20the%20Republic%20of%20Moldova%20and%20Transdniestria.pdf

վերաբերող հարցերում այնչափ, որչափ դրանք առնչվում են իր շահերին,
4. համաձայնագրի կյանքի կոչման երաշխավորություն Ռուսաստանի և Ուկրաինայի կողմից,
5. նախորդ՝ 1992 թ.-ի հուլիսի 21-ին կընքված համաձայնագրի (Մոսկվայի համաձայնագիր) դրույթների պահպանում,
6. համաձայնագրի կետերից մեկի խախտման դեպքում խորհրդակցություններ անցկացում՝ երաշխավորների հետ ստեղծված իրավիճակի կարգավորման նպատակով:

Կոզակի հուշագիր[21]

2003 թ.-ին Ռուսաստանը հրապարակում է «Մոլդովայի Միացյալ Պետության պետական կառուցվածքի հիմնարար սկզբունքների վերաբերյալ» հուշագրի սևագիր տարբերակը, որը ստացել է «Կոզակի հուշագիր» անվանումը՝ ի պատիվ ռուս քաղաքական գործիչ Դմիտրի Կոզակի: Ըստ նշյալ հուշագրի՝ Մոլդովան պետք է ունենար դաշնային կառուցվածք՝ կազմված հետևյալ երեք դաշնային սուբյեկտներից՝ Մոլդովա, Մերձդնեստր և Գագաուզիա: Ըստ հուշագրի՝ պետք է ստեղծվեին երեք տեսակի լիազորություններ՝ դաշնային, առանձին սուբյեկտների և համատեղ: Հուշագրով նախատեսվում էր նաև երկպալատ խորհրդարանի ստեղծում, որը պետք է բաղկացած լիներ վերին պալատից՝ Սենատից և ստորին պալատից՝ Ներկայացուցիչների տնից: Ստորին պալատը պետք է ընտրվեր համամասնական սկզբունքով, իսկ վերին պալատը պետք է կազմված լիներ 26 պատգամավորից. 9 պատգամավոր՝ Մերձդնեստրի տեղական օրենսդրի կողմից, 4-ը՝ Գագաուզիայի, իսկ մնացյալ 13-ը՝ դաշնային պետության խորհրդարանի ստորին պալատի: Հատկանշական է, որ սահմանադրական օրենքները կարող էին փոխվել միայն ստորին պալատի 71 անդամի 2/3-ի քվեարկության դեպքում, որը պարտադիր պետք է ենթակա լիներ հաստատման Սենատի անդամների 4/5-ի կողմից: Այսինքն, ըստ հուշագրի, Մերձդնեստրը լծակներ էր ստանում, որոնցով կարող էր ազդել Մոլդովայի արտաքին քաղաքականության վրա և թույլ չտալ, օրինակ, գործող սահմանադրության 11-րդ հոդվածով ամրագրված[22] մշտական չեզոքության սկզբունքի փոփոխությունը՝ այդպիսով խոչընդոտելով, օրինակ, Հյուսիսատլանտյան դաշինքին Մոլդովայի հնարավոր անդամակցությունը: Եվ սա այն դեպքում, երբ Մերձդնեստրի և Գագաուզիայի բնակչությունը միասին Մոլդովայի բնակչության 1/3-ից էլ քիչ է: Հավելենք նաև, որ, ըստ հուշագրի, Մերձդնեստրին և Գագաուզիային չվերաբերող հարցերի վերաբերյալ Մոլդովան կարող էր որոշումներ ընդունել՝ առանց վերջիններիս ներկայացուցիչների համաձայնության: Հուշագրի դրույթները չարժանացան Մոլդովայի հավանությանը, և մայրաքաղաք Քիշնևում բողոքի ցույցեր սկսվեցին: Կոմունիստական կուսակցությունը ներկայացնող նախկին նախագահ Վլադիմիր Վորոնինը մերժեց համաձայնագրի շուրջ հետագա քննարկումները[23]:

«5+2» ձևաչափ և «Բեռլին +» փաթեթ

«5+2»-ը բանակցային ձևաչափ է, որի շրջանակում քննարկվում է Մերձդնեստրի հակամարտության դիվանագիտական լուծման հնարավորությունը: Քննարկումներում, որոնք մեկնարկել են 2005 թ.-ին, ներգրավված են Ռուսաստանը, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Ուկրաինան, ԵԱՀԿ-ն, Եվրոպական միությունը (ԵՄ), ինչպես նաև Մոլդովան և Մերձդնեստրը: 2016 թ.-ին Բեռլինում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Մոլդովան և Մերձդնեստրը համաձայնել են աշխատել փոխվստահության ամրապնդման հետևյալ կետերի ուղղությամբ.
1. Գուրա Բիկուլուի և Բյիչոկ գյուղերը միմյանց կապող կամրջի վերաբացում,
2. Մերձդնեստրի համալսարանների վկա-

[21] Stefan Wolff, Russian Draft Memorandum on the basic principles of the state structure of a united state in Moldova (Kozak Memorandum) 17 November 2003, Memorandum On the basic principles of the state structure of a united state, available at http://stefanwolff.com/files/Kozak-Memorandum.pdf

[22] Constitutional Court of the Republic of Moldova, Constitution of the Republic of Moldova, available at https://www.constcourt.md/public/files/file/Actele%20Curtii/acte_en/MDA_Constitution_EN.pdf

[23] Jamestown.org, Moldova's president Kremlin visit does not unfreeze relations Publication: Eurasia Daily Monitor Volume: 3 Issue: 155, By: Vladimir Socor, available at https://jamestown.org/program/moldovas-president-kremlin-visit-does-not-unfreeze-relations/

յականների վավերացում (Apostille-ով),
3. Մերձդնեստրում Մոլդովայի կողմից կառավարվող լատինատառ ռումիներեն դպրոցների վերաբացում,
4. մոլդովացի ֆերմերների հասանելիություն Մերձդնեստրում գտնվող իրենց գյուղատնտեսական տարածքներին,
5. Մերձդնեստրում գրանցված տրանսպորտային միջոցների մասնակցություն միջազգային տրանսպորտային տեղաշարժերին,
6. Դնեստր գետի հետ կապված բնապահպանական խնդիրների համատեղ լուծում,
7. կողմերի հեռահաղորդակցական ցանցերի վերաինտեգրում,
8. համագործակցություն հանցագործությունների կանխարգելման և պատժի ուղղությամբ[24]:

Մերձդնեստրի հակամարտության տնտեսական կողմը

Խորհրդային ժամանակաշրջանում Մերձդնեստրը Մոլդովայի արդյունաբերական կենտրոնն էր, որտեղ գտնվում էին Մոլդովայի գրեթե բոլոր արդյունաբերական հսկաները: Տարածաշրջանում կենտրոնացած էր երկրի գրեթե ողջ էլեկտրաէներգիայի արտադրությունը, մինչդեռ Մոլդովայի մնացյալ տարածքները հիմնականում օգտագործվում էին գյուղատնտեսական գործունեության համար: Աղյուսակ 3-ում ներկայացված է Մերձդնեստրի մասնաբաժինը Մոլդովայի տնտեսության մեջ 1991 թ.-ին:

Ներկայում Մերձդնեստրի տնտեսության 4 սյուներն են Եվրոպայի խոշորագույն տեքստիլ արդյունաբերողներից մեկը՝ «Տիրոտեքս» ընկերությունը, «Ռիբնիցա» ցեմենտի գործարանը, արդյունաբերական արտադրանքի կեսից ավելին ապահովող «Մոլդովական պողպատագործական գործարան» ընկերությունը, ինչպես նաև Ուկրաինային սահմանակից Դնեստրովեց քաղաքում գտնվող Կաչուգայի էլեկտրակայանը: Տարածաշրջանի տնտեսությունը չափազանց կենտրոնացած է մի քանի խոշոր տնտեսավարողների «ձեռքերում»: Մասնավորապես՝ երկրի հարկային մուտքերի 30%-ն ապահովում է հատուկ ծառայությունների նախկին երկու աշխատակցի՝ Վիկտոր Գուշմանի և Իլյա Կազմալի հիմնադրած «Շերիֆ» կոնգլոմերատը, որի կազմում են վերոնշյալ «Տիրոտեքս» ընկերությունը, բջջային օպերատորը, երկրի բենզալցակայանների ու սուպերմարկետների ցանցի մեծ մասը, շինարարության ոլորտի շուրջ կեսը, մասնավոր հեռուստաընկերություն, բազմաթիվ այլ ընկերություններ, ինչպես նաև իր հիմնադրման օրվանից Մոլդովայի ֆուտբոլի առաջնության անվիճելի առաջատար «Շերիֆ» ֆուտբոլային ակումբն իր մարզադաշտով հանդերձ: Հատկանշական է, որ կոնգլոմերատի անվանումը կրող ֆուտբոլային ակումբը, որը գործում է չճանաչված պետության մայրաքաղաքում՝ Տիրասպոլում, մասնակցում է Մոլդովայի առաջնությանը[25]:

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Մերձդնեստրի տեսակարար կշիռը Մոլդովայի տնտեսությունում 1991 թ.-ին[26]

Ճյուղ	Տեսակարար կշիռ
Մեծ մեքենասարքավորումներ	100%
Էլեկտրաէներգիայի փոխակերպիչներ	100%
Գազի ապաստարաններ	100%
Բամբակի մանածագործություն	96.6%
Էլեկտրաէներգիայի արտադրություն	87.5%
Ցեմենտի արտադրություն	58.1%
Ցածր ձիաուժով շարժիչների արտադրություն	55.8%
Մետաղական թիթեղներ	23.5%
Գյուղատնտեսական արտադրանք	13.1%

[24] OSCE, Confidence-building measures “Berlin-plus” package, available at https://www.osce.org/mission-to-moldova/391502
[25] Dembińska, Magdalena, and Frédéric Mérand. "The role of international brokers in frozen conflicts: the case of Transnistria." Asia Europe Journal 17, no. 1 (2019).
[26] Akpinar, Ömer. "A Frozen Conflict Zone in Moldova: Why No Solution Found in Transnistria." Bayterek Uluslararasi Akademik Araştirmalar Dergisi 4, no. 2 (2021), p. 189.

Լինելով չճանաչված հանրապետություն՝ Մերձդնեստրի տնտեսությունը սերտորեն փոխկապակցված է ինչպես Ռուսաստանի, այնպես էլ ԵՄ տնտեսության հետ: Երկրի տնտեսական ցուցանիշների վերաբերյալ միջազգային կազմակերպություններն առանձին վիճակագրություն չեն վարում, սակայն համացանցում առկա բաց աղբյուրներից[27,28], ինչպես նաև գրականության ուսումնասիրությունից պարզ[29] է դառնում, որ երկրի արտահանման հիմնական ուղղությունը ԵՄ անդամ պետություններն են, մասնավորապես՝ Ռումինիան և Լեհաստանը: Արտահանումը դեպի ԵՄ մի քանի անգամ գերազանցում է դեպի ՌԴ արտահանումը: Տարածաշրջանը նաև կարողացել է օգտվել ԵՄ-ի և Մոլդովայի միջև կնքված ասոցացման համաձայնագրից, համաձայն որի՝ Մոլդովայում գրանցված մերձդնեստրյան ընկերություններին հնարավորություն է տրվում մուտք գործելու դեպի եվրոպական շուկա:

Այդուհանդերձ, չճանաչված պետության տնտեսությունը չափազանց շատ է կախված Ռուսաստանից, ինչն էլ էականորեն բարդացնում է կոնֆլիկտի լուծումը: Մասնավորապես՝ երկիրը ռուսական «Գազպրոմ» ընկերությանը 2021 թ.-ի դրությամբ պարտք է շուրջ 7.4 միլիարդ ԱՄՆ դոլար[30]: Պարտքը գոյացել է հետևյալ կերպ. տնային տնտեսությունների և ընկերությունների՝ գազի համար վճարված միջոցներն ուղիղ մուտքագրվել են չճանաչված հանրապետության պետական բյուջե, և այդ գումարներով պետությունը վճարել է պետծառայողների աշխատավարձը և կենսաթոշակառուների կենսաթոշակները[31]: Այսինքն, ըստ էության, չճանաչված պետությունը տարիներ շարունակ անվճար գազ է ստացել Ռուսաստանից, որն էժան գնով վաճառելով արտահանման ուղղվածություն ունեցող իր արդյունաբերական հսկաներին, ապահովել է իր կողմից արտահանվող ապրանքների մրցունակությունը միջազգային շուկայում: Մոլդովայի հետ միավորման պարագայում գազն այլևս անվճար չի լինի, իսկ Մոլդովան, որը Մերձդնեստրը համարում է իր անքակտելի մասը, ստիպված կլինի վճարել այդ պարտքը[32]: Շեշտենք նաև, որ երկրի հիմնական, մասնավորապես՝ պողպատի և էլեկտրաէներգիայի արտադրանքը, որը գլխավորապես արտահանվում է Մոլդովա և ԵՄ երկրներ, ամբողջությամբ կախված է մատակարարվող ռուսական գազից:

Անվճար գազից բացի, Մերձդնեստրը Ռուսաստանից ստանում է տարեկան տասնյակ միլիոնավոր դոլարների հասնող ֆինանսական աջակցություն և ներդրումներ՝ հանրային ենթակառուցվածքներում: Հատկանշական է, որ Մերձդնեստրի տրանսֆերտների 66-86%-ը Ռուսաստանից է: Արտարժույթը, որը ստացվում է Ռուսաստանից, երկրին անհրաժեշտ է իր արժույթի՝ մերձդնեստրյան ռուբլու փոխարժեքը կայուն պահելու համար[33]: Մերձդնեստրյան ռուբլին օրինական վճարամիջոց է համարվում միայն չճանաչված հանրապետությունում և չի կարող փոխանակվել հարևան Մոլդովայում կամ Ուկրաինայում: Եվ, ի վերջո, առանց ռուսական ֆինանսական օժանդակության՝ Մերձդնեստրի պետական հատվածի աշխատավարձերն ու կենսաթոշակները կնվազեն 40-60%-ով: Կենսաթոշակառուները երկրի բնակչության մեկ երրորդն են, և նրանց կենսաթոշակն ավելի բարձր է, քան Մոլդովայի ու Ուկրաինայի թոշակառուներինը, քանի որ դրան գումարվում է, այսպես կոչված, ռուսական հավելումը (российская надбавка-ն)՝ մեկ կենսաթոշակառուի հաշվով ամսական 195 մերձդնեստրյան ռուբլի (13 ամերիկյան դոլար)՝

[27] Intellinnews, EU now top destination for Transnistria's fast-growing exports, 17 April 2018, available at https://www.intellinews.com/eu-now-top-destination-for-transnistria-s-fast-growing-exports-140111/

[28] Eurasianet.org, Moldova: Separatist Transnistria Region Reorienting Trade from Russia to EU, 4 May 2016, available at https://eurasianet.org/moldova-separatist-transnistria-region-reorienting-trade-from-russia-to-eu

[29] Dembińska, Magdalena, and Frédéric Mérand. "The role of international brokers in frozen conflicts: the case of Transnistria." Asia Europe Journal 17, no. 1 (2019).

[30] Akpinar, Ömer. "A Frozen Conflict Zone in Moldova: Why No Solution Found in Transnistria." Bayterek Uluslararasi Akademik Araştirmalar Dergisi 4, no. 2 (2021), p. 189.

[31] Dembińska, Magdalena, and Frédéric Mérand. "The role of international brokers in frozen conflicts: the case of Transnistria." Asia Europe Journal 17, no. 1 (2019), p. 7

[32] Նույն տեղում:

[33] Նույն տեղում:

կախված ռուսական ռուբլու փոխարժեքից[34]: Այսպիսով՝ պետք է արձանագրենք, որ Ռուսաստանը, ունենալով ոչ միայն քաղաքական, այլև հսկայական տնտեսական լծակներ, կարող է վճռորոշ դերակատարություն ունենալ հակամարտության կարգավորման գործում: Սակայն, ռուսական ֆինանսական օժանդակությունն էլ ավելի է նպաստում չճանաչված հանրապետության անկախական ձգտումներին՝ քաղաքական շարժառիթներին ավելացնելով հստակ և չափելի տնտեսական շարժառիթներ:

Մերձդնեստր և Գագաուզիա. երկու տարբեր իրողություններ

Գագաուզներն ուղղափառ քրիստոնյա թյուրքական և թյուրքախոս ժողովուրդ են: Խորհրդային ժամանակաշրջանի ռուսական լեզվական և մշակութային գերիշխանությունը շոշափելի ազդեցություն է ունեցել վերջիններիս լեզվամտածողության վրա՝ նպաստելով մայրենիի հետզհետե նահանջին և ռուսերենի ամրապնդմանը ոչ միայն ազգամիջյան, այլև միջանձնային շփումներում: Ռումինիայի հետ Մոլդովայի հավանական միավորման «ուրվականը» անջատողական տրամադրություններ առաջացրեց նաև Գագաուզիայում՝ Մոլդովայի հարավում[35]: Մոլդովայի լեզվական քաղաքականության հետևանքով 1990 թ.-ին Գագաուզիան հայտարարեց անկախ հանրապետության հռչակման մասին՝ Կոմրատ մայրաքաղաքով: Նշենք, որ անկախ գագաուզական պետության պատմական նախադեպ երբևէ չի եղել: Ավելին, ի տարբերություն Մերձդնեստրի, Գագաուզիան նախկինում Ռումինիայի կազմում էր[36]: Հարկ ենք համարում առանձնահատուկ կերպով ընդգծել նաև, որ խորհրդային տարիներին ո՛չ Մերձդնեստրը, ո՛չ էլ Գագաուզիան ՄԽՍՀ այլ տարածքներից տարբերվող կարգավիճակ չեն ունեցել[37], ի տարբերություն, օրինակ, Արցախի, որն ունեցել է ինքնավար մարզի կարգավիճակ: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ, օրինակ, Մերձդնեստրի անկախությունը հռչակել է ոչ թե տեղական խորհրդարանը, որը գոյություն չուներ և չէր էլ կարող գոյություն ունենալ, քանի որ երկրամասը հատուկ կարգավիճակ չուներ, այլ, ինչպես արդեն նշեցինք, ՄԽՍՀ խորհրդարանի Մերձդնեստրից ընտրված պատգամավորները: Մերձդնեստրին համանման՝ Գագաուզիան նույնպես բավական ռուսամետ է: Հատկանշական է, որ 2014 թ.-ին՝ Ղրիմի հայտնի իրադարձություններից հետո, Գագաուզիայում խորհրդակցական նշանակության հանրաքվե անցկացվեց, որի ընթացքում մասնակիցներին տրվեց երեք հարց: Մասնակիցների 98.4%-ը կողմ արտահայտվեց Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) հետ հարաբերությունների առավել խորացմանը, 97.2%-ը դեմ եղավ ԵՄ-ին հետագա հնարավոր անդամակցությանը, և, վերջապես, 98.9%-ը կողմ արտահայտվեց Գագաուզիայի անկախության ճանաչմանն այն պարագայում, եթե Մոլդովան դադարի անկախ պետություն լինելուց: Գագաուզիայում ցնծությամբ ընդունվեցին 2014 թ.-ին Ղրիմում տեղի ունեցած հանրաքվեի արդյունքները և դրան հաջորդած քաղաքական իրադարձությունները[38]:

Սակայն, ի տարբերություն Մերձդնեստրի, Գագաուզիան չունի ԽՍՀՄ-ից ժառանգած տնտեսական հզորություններ, ինչն անհրաժեշտ նախադրյալ է ամուր պետականության կայացման համար: Մոլդովայի իշխանություններին հաջողվեց լուծել Գագաուզիայի անջատողականների խնդիրը՝ շրջանին դե յուրե լայն ինքնավարություն տալով: Մասնավորապես՝ 1994 թ.-ին Մոլդովայի խորհրդարանն ընդունեց «Գագաուզիայի հատուկ իրավական կարգավիճակի մասին» օրենքը[39]:

[34] Официальный сайт государственной администрации города Бендеры, ''Российские надбавки к пенсиям будут выплачивать после очередного транша гуманитарной помощи'', доступно на https://bendery-ga.org/3815-rossiyskie-nadbavki-k-pensiyam-budut-vyplachivat-posle-ocherednogo-transha-gumanitarnoy-pomoschi.html

[35] López Jiménez, José Ángel. "The dissolution of the Soviet Union and complex state construction processes. Two differentiated secession models in the Republic of Moldova: Gagauzia and Transnistria." (2019).

[36] Roper, Steven D. "Regionalism in Moldova: The Case of Transnistria and Gagauzia." Regional & Federal Studies 11, no. 3 (2001): p. 117.

[37] López Jiménez, José Ángel. "The dissolution of the Soviet Union and complex state construction processes. Two differentiated secession models in the Republic of Moldova: Gagauzia and Transnistria." (2019), p. 410

[38] Նույն տեղում, էջ 414:

[39] CIS legislation, Law of the Republic of Moldova of December 23, 1994 No. 344-XIII About special legal status of Gagauzia (Gagauz Erie) (as amended on 08-05-2003), available at https://cis-legislation.com/document.fwx?rgn=3287

Հենց սրանում է Մերձդնեստրի և Գագաուզիայի հիմնական տարբերությունը: Մերձդնեստրի վերնախավը, տարիների ընթացքում կենտրոնացնելով իշխանությունը, ստեղծելով պետական ինստիտուտներ և իր ձեռքում կուտակելով քաղաքական ու տնտեսական շոշափելի կապիտալ, ցանկանում է, որ Մոլդովայի հետ վերամիավորումը տեղի ունենա ոչ թե օրենքի, այլ իրավահավասար պայմանագրի հիման վրա՝ դաշնայնացնելով Մոլդովան: Ինչ վերաբերում է Ռումինիայի հետ Մոլդովայի վերամիավորման «ուրվականին», ապա պետք է հստակ կերպով արձանագրել հետևյալը. Մոլդովայի գործող սահմանադրությամբ այդպիսի իրավական կառուցակարգ իսկապես նախատեսված է: Մասնավորապես՝ սահմանադրության 142-րդ հոդվածում նշված է, որ երկրի ինքնիշխանությունը, անկախությունը, մշտական չեզոք կարգավիճակը կարող են փոփոխվել հանրաքվեի միջոցով[40]: Սակայն, հարկ ենք համարում առանձնահատուկ կերպով ընդգծել, որ 1994 թ.-ին Մոլդովայի խորհրդարանի ընդունած «Գագաուզիայի հատուկ իրավական կարգավիճակի մասին» վերոնշյալ օրենքը տալիս է արտաքին ինքնորոշման իրավունք (right to external self-determination): Այն ամրագրված է օրենքի առաջին հոդվածի չորրորդ կետում[41]: Ավելին, նշյալ օրենքի 4-րդ կետը հնարավորություն է տալիս այն շրջաններին, որտեղ գագաուզները մեծամասնություն են կազմում, իրականացնելու հանրաքվե և միանալու Գագաուզիայի ինքնավարությանը (Gagauz Erie)[42]: Հավելենք, որ Գագաուզիան ունի սեփական բյուջե, իր տարածքի բնական ռեսուրսների օգտագործման հանդեպ վերահսկողության իրավունք, խորհրդարան (Halk Toplusu) և կառավարիչ (Başkan): Գագաուզիայի խորհրդարանն իրավունք ունի ներգրավվելու Մոլդովայի ներքին և արտաքին քաղաքական հարցերում այնչափ, որչափ դրանք վերաբերում են Գագաուզիային: Գագաուզիայի պաշտոնական լեզուներն են ռումիներենը, գագաուզերենը և ռուսերենը[43]: Գագաուզիայի մոդելը, որն առաջարկվել է Մերձդնեստրի իշխանություններին, և որով ի չիք է դառնում Ռումինիայի հետ Մոլդովայի հնարավոր միավորման՝ ինքնահռչակ պետության համառությունը հիմնավորող փաստարկը, հետևողականորեն մերժվել է Մերձդնեստրի իշխանությունների կողմից: Ավելին, Մերձդնեստրի իշխանությունները Գագաուզիայի մոդելն ընկալել են իբրև հակամոդել[44]:

Մերձդնեստրի հակամարտության զարգացման հնարավոր սցենարները

2022 թ.-ի ուկրաինական իրադարձությունների համատեքստում, մամուլում և փորձագիտական շրջանակներում հաճախ հնչողը հենց Մերձդնեստրի հարցն է: Կա հավանականություն, որ ռուսական ուժերն Օդեսան իրենց վերահսկողության տակ վերցնելուց հետո շատ փոքր հեռավորության վրա կլինեն Ուկրաինային սահմանակից Մերձդնեստրից, որտեղ տեղակայված են ռուսական ռազմական ուժեր: 2022 թ.-ի ապրիլի 26-ին Մերձդնեստրում տեղի ունեցավ ռազմական էսկալացիա, որի ժամանակ հարվածներ հասցվեցին անվտանգության ծառայության շենքին և Տիրասպոլի օդանավակայանին: Ինքնահռչակ հանրապետության նախագահ Վադիմ Կրասնոսելսկին ռուսական «ՏԱՍՍ» լրատվական գործակալությանը փոխանցեց, որ հարձակման հետքերը տանում են դեպի Ուկրաինա՝ նպատակ ունենալով հակամարտության մեջ ներքաշել նաև Մերձդնեստրը[45]: Իր հերթին, Ուկրաինայի նախագահի խորհրդական Ալեքսեյ Արեստովիչը հայտարարեց, որ իր երկիրը «մատի մեկ շարժումով» կարող է լուծել Մերձդնեստրի հարցը, սակայն դրա համար անհրաժեշտ է, որ Մոլդովան պաշտոնապես դիմի իրենց, քանի որ դա Մոլդո-

[40] Constitutional Court of the Republic of Moldova, Constitution of the Republic of Moldova, available at https://www.constcourt.md/public/files/file/Actele%20Curtii/acte_en/MDA_Constitution_EN.pdf

[41] CIS legislation, Law of the Republic of Moldova of December 23, 1994 No. 344-XIII About special legal status of Gagauzia (Gagauz Erie) (as amended on 08-05-2003), available at https://cis-legislation.com/document.fwx?rgn=3287

[42] Նույն տեղում:

[43] Նույն տեղում:

[44] López Jiménez, José Ángel. "The dissolution of the Soviet Union and complex state construction processes. Two differentiated secession models in the Republic of Moldova: Gagauzia and Transnistria." (2019), p. 415.

[45] Reuters ''Moldovan breakaway region says attacks can be traced to Ukraine – TASS'', 26 April 2022, available at https://www.reuters.com/world/europe/moldovan-breakaway-region-says-attacks-can-be-traced-ukraine-tass-2022-04-26/

վայի տարածքն է[46]: Միաժամանակ, Մոլդովան կտրականապես մերժեց[47] ուժային ճանապարհով խնդիրը լուծելու առաջարկը՝ հղում անելով Մոլդովայի խորհրդարանի՝ 2005 թ.-ին ընդունած «Դնեստր գետից ձախ ընկած բնակավայրերի հատուկ իրավական կարգավիճակի մասին» օրենքին[48], որտեղ հստակ նշված է, որ խնդիրը պետք է լուծվի խաղաղ ճանապարհով:

Ինչպես արդեն ասացինք, Մոլդովան և Մերձդնեստրն ակտիվորեն համագործակցում են տնտեսության բնագավառում, իսկ տարածաշրջանի մարզական թիմերը մասնակցում են Մոլդովայի առաջնությանը: Ավելին, Մերձդնեստրից բազմաթիվ ուսանողներ ուսանում են Մոլդովայում: Համագործակցության այդպիսի մոդելը բացակայում է, օրինակ, Աբխազիայի և Վրաստանի պարագայում: Պատճառը տնտեսական փոխկախվածությունն է: Մոլդովային անհրաժեշտ է Մերձդնեստրի էլեկտրաէներգիան, ինչպես նաև Մերձդնեստրով անցնող ռուսական գազի խողովակը: Մերձդնեստրին Մոլդովան անհրաժեշտ է արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու և արտաքին շուկաներ դուրս գալու համար, քանի որ աշխարհը չի ճանաչում ո՛չ մերձդնեստրյան արժույթը, ո՛չ անձնագրերն ու լիցենզիաները, ո՛չ էլ փաստաթղթերը: Ուստի խնդրի ռազմական լուծումը քիչ հավանական է, մանավանդ՝ հաշվի առնելով ռուսական ռազմական ներկայությունը, որը, ի հեճուկս Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Գլխավոր ասամբլեայի (ԳԱ) 2018 թ.-ի հունիսի 22-ին ընդունած բանաձևի[49] և Մոլդովայի սահմանադրության, շարունակում է տեղակայված մնալ Մերձդնեստրի տարածքում: Սակայն, կարծում ենք, որ Մոլդովայի և Մերձդնեստրի միավորումն անխուսափելի է, քանի որ դա բխում է երկու երկրների տնտեսական վերնախավերի, մասնավորապես՝ Մերձդնեստրի այն գործարարների շահերից, որոնք կա՛մ չունեն քաղաքական կապիտալ, կա՛մ խոր տնտեսական կապեր Ռուսաստանի հետ: Ուստի դիտարկում ենք իրավիճակի զարգացման երկու հնարավոր սցենարներ:

Սցենար 1. *Ռուսաստանը նշանակալի ռազմական հաջողության է հասնում Ուկրաինայում:* Այս դեպքում էականորեն, գուցե տասնամյակներով հետաձգվի Մոլդովայի և Մերձդնեստրի միավորման հեռանկարը, քանի որ նախ՝ տարածաշրջանի խաղացողներն առավել զգուշավորություն կցուցաբերեն Ռուսաստանի հետ հարաբերություններում: Ավելին, եթե Ռուսաստանին հաջողվի իր արդյունավետ վերահսկողության տակ վերցնել Մերձդնեստրին մերձակա ուկրաինական տարածքները, ապա, հաշվի առնելով Ուկրաինայի արևելյան չորս շրջաններում անցկացվող՝ Ռուսաստանի հետ միավորման վերաբերյալ հանրաքվեները, միանգամայն հավանական է, որ նմանատիպ հանրաքվե կանցկացվի նաև Մերձդնեստրում:

Սցենար 2. *Ռուսաստանը ռազմական լիակատար ձախողում (ֆիասկո) է գրանցում Ուկրաինայում:* Եթե նշվածն իրականություն դառնա, ապա չի բացառվում, որ կմեծանա Մոլդովայի առնվազն դիվանագիտական ճնշումը Մերձդնեստրի չճանաչված հանրապետության վրա՝ Մոլդովայի սահմանած «խաղի կանոններով» միավորման, ինչպես նաև Ռուսաստանի վրա՝ զորքերի դուրսբերման պահանջներով: Այդպիսի իրավիճակում, գիտակցելով հնարավոր ռազմական հարձակման դեպքում Ռուսաստանի կողմից օգնության շատ ավելի փոքր ներուժն ու հավանականությունը, Մերձդնեստրի ղեկավարությունը, դատելով այս ամենից, կգնա քաղաքական զիջումների՝ մանավանդ Ուկրաինայի՝ Մոլդովային արդեն իսկ առաջարկած վերոնշյալ պաշտոնական ռազմական օգնության համատեքստում: Ուստի իրադարձությունների նման զարգացման պարագայում, մեր կարծիքով, Մերձդնեստրի հակամարտությունը կհանգուցալուծվի ըստ Գագաուզիայի մոդելի:

[46] Intellinews.com, Moldova rejects Ukraine's offer to seize Transnistria By Iulian Ernst, 28 April, 2022, available at https://www.intellinews.com/moldova-rejects-ukraine-s-offer-to-seize-transnistria-242742/

[47] Նույն տեղում:

[48] CIS legislation, Law of the Republic of Moldova of July 22, 2005 No. 173-XVI, About basic provisions of special legal status of settlements of left bank of Dniester (Transnistria), available at https://cis-legislation.com/document.fwx?rgn=18356

[49] United Nations, Resolution adopted by the General Assembly on 22 June 2018 [without reference to a Main Committee (A/72/L.58 and A/72/L.58/Add.1)]. Complete and unconditional withdrawal of foreign military forces from the territory of the Republic of Moldova, available at https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N18/195/38/PDF/N1819538.pdf?OpenElement

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Министерство иностранных дел Приднестровской Молдавской Республики, ‘’Приднестровье: государство, которого не существует’’, https://mid.gospmr.org/ru/FxB
2. Официальный сайт государственной администрации города Бендеры, ‘’Российские надбавки к пенсиям будут выплачивать после очередного транша гуманитарной помощи’’, https://bendery-ga.org/3815-rossiyskie-nadbavki-k-pensiyam-budut-vyplachivat-posle-ocherednogo-transha-gumanitarnoy-pomoschi.html
3. Akpinar, Ömer. "A Frozen Conflict Zone in Moldova: Why No Solution Found in Transnistria." Bayterek Uluslararasi Akademik Araştirmalar Dergisi 4, no. 2 (2021), 179-193.
4. CIS legislation, Law of the Republic of Moldova of December 23, 1994 No. 344-XIII About special legal status of Gagauzia (Gagauz Erie) (as amended on 08-05-2003), https://cis-legislation.com/document.fwx?rgn=3287
5. CIS legislation, Law of the Republic of Moldova of July 22, 2005 No. 173-XVI, About basic provisions of special legal status of settlements of left bank of Dniester (Transnistria), https://cis-legislation.com/document.fwx-?rgn=18356
6. Constitutional Court of the Republic of Moldova, Constitution of the Republic of Moldova, https://www.constcourt.md/public/files/file/Actele%20Curtii/acte_en/MDA_Constitution_EN.pdf
7. Crowther, William. "The politics of ethno-national mobilization: nationalism and reform in Soviet Moldavia." The Russian Review 50, no. 2 (1991). 183-202.
8. Dembińska, Magdalena, and Frédéric Mérand. "The role of international brokers in frozen conflicts: the case of Transnistria." Asia Europe Journal 17, no. 1 (2019), 15-30.
9. Eurasianet.org, Moldova: Separatist Transnistria Region Reorienting Trade from Russia to EU, 4 May 2016, https://eurasianet.org/moldova-separatist-transnistria-region-reorienting-trade-from-russia-to-eu
10. Intellinews.com, Moldova rejects Ukraine's offer to seize Transnistria By Iulian Ernst, 28 April, 2022, https://www.intellinews.com/moldova-rejects-ukraine-s-offer-to-seize-transnistria-242742/
11. Intellinnews, EU now top destination for Transnistria's fast-growing exports, 17 April 2018, https://www.intellinews.com/eu-now-top-destination-for-transnistria-s-fast-growing-exports-140111/
12. Jamestown.org, Moldova's president Kremlin visit does not unfreeze relations Publication: Eurasia Daily Monitor Volume: 3 Issue: 155, By: Vladimir Socor, https://jamestown.org/program/moldovas-president-kremlin-visit-does-not-unfreeze-relations/
13. Law of the Moldavian Soviet Socialist Republic of September 1, 1989 No. 3465-XI About functioning of languages in the territory of the Republic of Moldova (as amended on 24-05-2018), https://cis-legislation.com/document.fwx?rgn=3281
14. López Jiménez, José Ángel. "The dissolution of the Soviet Union and complex state construction processes. Two differentiated secession models in the Republic of Moldova: Gagauzia and Transnistria." (2019).
15. Mason, John Alan. "Internationalist mobilization during the collapse of the Soviet Union: the Moldovan elections of 1990." Nationalities Papers 37, no. 2 (2009): 159-176.
16. OSCE, Confidence-building measures "Berlin-plus" package, https://www.osce.org/mission-to-moldova/391502
17. Reuters, ‘’Moldovan breakaway region says attacks can be traced to Ukraine – TASS'', 26 April 2022, https://www.reuters.com/world/europe/moldovan-breakaway-region-says-attacks-can-be-traced-ukraine-tass-2022-04-26/
18. Roper, Steven D. "Regionalism in Moldova: The Case of Transnistria and Gagauzia." Regional & Federal Studies 11, no. 3 (2001):
19. Stefan Wolff, Russian Draft Memorandum on the basic principles of the state structure of a united state in Moldova (Kozak Memorandum) 17 November 2003, Memorandum On the basic principles of the state structure of a united state, http://stefanwolff.com/files/Kozak-Memorandum.pdf
20. Ülger, Irfan Kaya, and Iuliana Oprea. "The Conflict of Transnistria." https://e-journaloflaw.org/wp-content/uploads/2017/05/The-Conflict-of-Transnistria.pdf
21. United Nations peacemaker, Agreement on the principles for a peaceful settlement of the armed conflict in the Dinestar region of the Republic of Moldova dated at 21/07/1992, available at https://peacemaker.un.org/sites/peacemaker.un.org/files/MD%20RU_920000_AgreementPrinciplesPpeacefulSettlementDniestrConflict.pdf
22. United Nations peacemaker, Memorandum On the Bases for Normalization of Relations Between the Republic of Moldova and Transdneistria,

https://peacemaker.un.org/sites/peacemaker.un.org/files/MD_970508_Memorandum%20on%20the%20Basis%20for%20Normalization%20of%20Relations%20between%20the%20Republic%20of%20Moldova%20and%20Transdniestria.pdf
23. United Nations, Resolution adopted by the General Assembly on 22 June 2018 [without reference to a Main Committee (A/72/L.58 and A/72/L.58/Add.1)]. Complete and unconditional withdrawal of foreign military forces from the territory of the Republic of Moldova, https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N18/195/38/PDF/N1819538.pdf?OpenElement
24. Vahl, Marius, and Michael Emerson. "Moldova and the Transnistrian conflict." Jemie (2004)

Альберт АЙРАПЕТЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», ассистент кафедры международных экономических отношений, АГЭУ, кандидат экономических наук

ГЕОПОЛИТИЧЕСКАЯ ХРОНИКА

ПРИДНЕСТРОВСКИЙ КОНФЛИКТ. ПРОИСХОЖДЕНИЕ, ПРИРОДА И ПЕРСПЕКТИВЫ

Хотя распад Советского Союза был относительно мирным, в отличие, например, от другого социалистического государства с конфедеративным устройством – Югославии, однако стремление отдельных регионов к независимости нередко сопровождалось вооруженной борьбой, которая в дальнейшем трансформировалась в «замороженные конфликты» и превращалась в «мины», заложенные под государственность ряда постсоветских стран, тем самым препятствуя и тормозя их развитие, таким образом создавая угрозу региональной стабильности и миру. Приднестровский конфликт является одним из неурегулированных конфликтов на постсоветском пространстве, в основе которого лежит борьба меньшинства за признание и реализацию своего права на самоопределение. В рамках данной статьи будут представлены истоки и суть приднестровского конфликта. Кроме того, будет последовательно проиллюстрирована суть всех важных международных соглашений, которые связаны с конфликтом. Затем будут проведены параллели между Приднестровьем и Гагаузской автономией. Два конфликта, возникшие по схожим причинам и в одной стране, которые в итоге имели разные исходы. В конце статьи будут рассмотрены два наиболее вероятных сценария дальнейшего развития приднестровского конфликта.

Ключевые слова: *Приднестровье, Молдова, конфликт, война, экономика, Гагаузия, перспективы*

Albert HAYRAPETYAN
Senior Researcher of «Amberd» Research Center, PhD in Economics, Assistant Professor in the Chair of International Economics, ASUE

GEOPOLITICAL CHRONICLE

TRANSNISTRIA CONFLICT: ORIGIN, NATURE AND PROSPECTS

Although the disintegration of the Soviet Union was relatively peaceful, unlike, for example, another socialist state with confederal structure – Yugoslavia, the independence aspirations of individual regions were often accompanied by armed struggle, which later transformed into "frozen conflicts" and turned into ‘’mines’’ placed under the statehood of a number of post-Soviet countries, thus preventing and hindering their development and threatening the regional stability and peace. The Transnistrian conflict is one of the unresolved conflicts in the post-Soviet territory, the basis of which is the struggle of the minority for the recognition and realization of its right to self-determination. Within the framework of this paper, the origins and essence of the Transnistrian conflict will be presented. Moreover, the gist of all important international agreements related to the conflict are illustrated one by one. Afterwards, parallels are drawn between Transnistria and Gagauzian autonomy: two conflicts that arose due to similar reasons and in the same country, which eventually had different outcomes. At the end of the research, two most likely scenarios are discussed for the further development of the Transnistrian conflict.

Key words: *Transnistria, Moldova, conflict, war, economy, Gagauzia, prospects*